



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



« 10 » 06 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ000043

Ձեռնարկողը՝

«Սամ. Կար. Քար» ՍՊԸ
Ք. Երևան, Վարդանանց 8 շ.

Գործունեությունը՝

**Հուշակերտի բազալտի հանքավայրի արդյունահանման
շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեքվություն**
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



(Handwritten signature)

Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000043

«12» 06 2019թ.

Հուշակերտի բազալտի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	<<Սամ. Կար. Քար>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք

Հուշակերտի բազալտի հանքավայրը գտնվում է Արմավիրի մարզում, Արմավիր քաղաքից 20 կմ արևմուտք և զբաղեցնում է 2,3հա տարածք: Այն տեղադրված է Երվանդաշատ գյուղից 10 կմ դեպի արևելք՝ 940-1010մ բացարձակ նիշերի վրա: Մոտակա բնակավայրերն են Բագարան, Երվանդաշատ, Հուշակերտ, Վանանդ, Բերքաշատ գյուղերը, Քարակերտ և Արաքս երկաթուղային կայարանները: Մոտակա բնակավայրը հանքավայրից գտնվում է նվազագույնը 4կմ հեռավորության վրա:

Բացահանքի անկյունային կետերի կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով՝

- | | |
|----------------|----------------|
| 1. x = 4438744 | 3. x = 4438801 |
| y = 8396085 | y = 8396302 |
| 2. x = 4438873 | 4. x = 4438704 |
| y = 8396138 | y = 8396258 |

Հուշակերտի բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ-ի 18.03.2005թ-ի N 58 որոշմամբ՝ ըստ B+C1 կարգերի, 198.5 հազ.մ³ քանակությամբ:

2006-2017թթ ժամանակահատվածում հանքավայրում կատարվել են արդյունահանման աշխատանքներ, որի ընթացքում հանքավայրում մարվել է 11690.0մ³ բազալտի պաշար: Հանքավայրի մնացորդային պաշարը 01.01.2018թ-ի դրությամբ կազմում



է 186810.0 մ³, այդ թվում 1-Յ բլոկում՝ 86450.0մ³: Բլոկների ելքը լեռնային զանգվածից կազմում է 40%:

Հաստատված պաշարները դիտարկվել են երեսապատման բլոկների արտադրման համար հումք 9479-2011 ԳՈՍՏ, իսկ բլոկների արդյունահանման ընթացքում առաջացած թափոնները շինարարական խճի (8267-95 ՀՍ) և ավազի (8736-2014 ԳՈՍՏ) արտադրության համար: Հանքավայրի ծառայման ժամկետը կազմում է 50 տարի:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Նշված պայմաններով կառուցված բացահանքը կունենա հետևյալ պարամետրերը.

- Ամենամեծ երկարությունը - 180մ,
- Ամենամեծ լայնությունը - 141մ,
- Առավելագույն խորությունը - 6.21մ:

Բացահանքում ընդգրկված հաշվեկշռային (մարվող) պաշարները կազմում են 86450մ³, կորզվող բազալտները 84100մ³:

Ընդհանուր բացահանքային կորուստները կազմում են 2350.0մ³ կամ 2.7%:

Հաշվի առելով նախագծային կորուստները, բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ բազալտի արդյունահանվող զանգվածի կկազմի՝ 1680.0մ³: Աշխատանքային հորիզոնի բացման ընթացքում օգտագործվում է բուլդոզեր ավտոմոբիլային կռունկ ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրը:

Հանքավայրի լեռնատեխնիկական և լեռնաերկրաբանական պայմանները կանխորոշում են բացահանքի շահագործումը միակողմանի, ընդերկայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով, մակաբացման ապարները ներքին լցակույտ տեղափոխումով:

Մակաբացման ապարները նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի սահմաններում ներկայացված են 1.1մ-ից մինչև 1.8մ հզորության առաջացումներով (ալյուվիալ և դելյուվիալ), խարամացած, քայքայված բազալտների կտորներով, փուշտային շերտով: Մակաբացման ապարների ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 27840.0մ³, այդ թվում, ժամանակակից առաջացումների շերտը՝ 5336.0մ³, փուշտայի շերտը՝ 22504.0մ³:

Մակաբացման ապարների հեռացումը կատարվելու է բուլդոզեր - Դ3-170.03, ՅՕ-4321 էքսկավատոր-ԿրԱ3-256Ե ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

Բլոկերի արդյունահանման աշխատանքները կատարվելու են հորատասեպային աշխատանքների եղանակով:

Բացահանքում արտադրված բլոկների բարձումը ԿրԱ3-256Ե մակնիշի ավտոինքնաթափի մեջ կատարվում է 16տ բեռնաբարձությամբ ԿԸ-4561 ավտոմոբիլային կռունկի միջոցով:

Բլոկների արտադրության ժամանակ առաջացած արտադրական թափոնները՝ որոնք կազմում են օգտակար հանածոյի պաշարի 60%-ը հանդիսանում են որպես հումք շինարարական խճի և ավազի արտադրության համար, դրանք 3.8մ³/հերթ ծավալով Դ3-170.03 բուլդոզերի միջոցով տեղափոխվելու են 10-15մ հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև կուտակված թափոններ ՅՕ-4321 մակնիշի էքսկավատորով բարձրվում են գնորդների ավտոինքնաթափերի մեջ ու տեղափոխվում հանքավայրից:

Մակաբացման ապարների տեղափոխումը մինչև 0.15կմ հեռավորության վրա ներքին լցակույտեր նախատեսվում է կատարել ԿրԱ3-256Ե մակնիշի ավտոինքնաթափերով:



Բացահանքի շահագործման տարիներին, լցակույտային ապարները նախատեսվում է պահեստավորել ներքին լցակույտերում:

Շահագործման 20-րդ տարուց, աշխատանքներին զուգահեռ, լցակույտային ապարները սկսվում են փոխվել բացահանքի մշակված տարածքներում:

Ընդունված է լցակույտաառաջացման բուլդոզերային եղանակը:

Բացահանքի շահագործումը սկսելու համար նախատեսվում են հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները՝

1. Թեք կիսախրամի անցում՝ 50.0մ երկարությամբ, 8.0մ լայնությամբ,

2. 970մ աշխատանքային հորիզոնից մակաբացման ապարների հեռացում 440.0 մ³ ծավալով,

3. Մոտեցող ավտոճանապարհի կարգաբերում – 200.0մ³ ծավալով,

4. Լցակույտային հրապարակի նախապատրաստում – 350.0մ³ ծավալով,

5. Արտադրական հրապարակի նախապատրաստում – 50.0մ³ ծավալով:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակույտի մակերևույթի ջրման համար: Ջրառը կիրականացվի մոտակա բնակավայրերի ջրմատակարարման համակարգերից՝ ՋՕ պայմանագրերի համապատասխան:

Խմելու ջուր բերվելու է կցովի ջրի ցիստեռնով:

Տեխնիկական ջուրը մատակարարվելու է KO-002 մակնիշի ջրցան լվացող ավտոմեքենայով:

Համաձայն հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների՝ ստորգետնյա ջրերը հանքավայրի տարածքում բացակայում են:

Բացահանքի տարածքը թափվող հորդ անձրևային ջրերի մի մասը ներծծվում են բացահանքի հատակի ապարների ծակոտիների և ճեղքերի միջով, իսկ մյուս մասը հեռանում է ինքնահոս կերպով:

Ռեկուլտիվացման աշխատանքները նախատեսվում է կատարել 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում կատարվելու են՝ մակաբացման ապարների փռում և հարթեցում՝ 1.1հա, արտադրական հրապարակի տարածքի վերականգնում՝ 0.1հա, բացահանքը սպասարկող ավտոճանապարհների հարթեցում՝ 0,6հա:

Վերականգման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 1,8հա:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար ներառյալ կենսաբանական ռեկուլտիվացումը, նախատեսված է 926258 դրամ:

Հանքավայրի տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսված են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, շարքական մեկ անգամ՝ հաճախականությամբ,



- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն կանխատեսվում: Օրենսդրությամբ սահմանված կարգով Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
2. Առաջացած թափոնների կառավարումն (շինարժի, կենցաղային աղբի) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Սամ. Կար. Քար.>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Հուշակերտի բազալտի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Ձ. Զուռնայան